չատուր կեսարացին, և տպարանական գործն ալ անշքացած: Միաբաններ անօգուտ կը համարէին այդ արուեստը: Այս աննկուն և արուեստին սիրովն բորբոքուն վարդապետին ճակատագրուած էր կրկին պայքարիլ, փոխանակ յատին կրօնաւորներու՝ հայրենակից նոյնադաւան խաւարամիտներու դէմ: Եւ այդ աննպաստ պայմաններու մէջ ձեռնամուխ եղաւ գործի, մեծանուն վանահօր յիշատակն անմահացուցնելու և տգետ Միաբանութեան ջախջախիչ դաս մը տալու համար: 1647 ին է որ կը դրոշմէ **Պարզատումար Ագարիայի** իսկ 1650 ին **Ամ.ատուցիչ** մը զոր կիսկատար կը թողու: — Խ. Կեսարացիի մահէն վերջ Ն. Ջուղայի աթոռը բաւական կը մնայ առաջնորդէ. նոյն թեմը կը կառավարուի իր ձեռնասուններէն Դաւիթի կողմէ՝ զոր յիշատակեցինք վերեւ: Տպագրիչ Յովհաննէս Վ.ի դէմ եղած հակառակութիւնք ա՛յնքան կը սաստկանան որ, անիկա կ'ստիպուի Էջմիածին անցնիլ. հոն եպիսկոպոս կը ձեռնադրուի և կ'ուղարկուի Հին Ջուղա, ուր կ'ըսպաննուի՝ հայ ժողովուրդին շահերը պաշտպանած ատեն:



1642ին Ամենափրկիչ վանքը տպուած «Աստեղի ժամագիրքի» Յիշատակարանը [փոքրցուած]

** Ամենափրկիչ վանքն իր հեռացմամբ՝ 37 տարի անգործութեան դատապարտուած է վանքին մամուլը: 1687 ին, առաջնորդ Ստեփաննոս Եպսկ.ի ջանքերով է որ տպարանը կը վերաբացուի, կետ նպատակի ունենալով տարածել «զվանդեմի սուրբ գրեանքս» և մաքառիլ Պապականներու ա՛յն տարաձայնութեան դէմ թէ Հայերը հերձուածողներ են: Նոյն տարին կը տպուին 2 հատորներ, Ա. **Դիրք աստեղական** «որ ասի վիճաբանական . . . Յառաջնորդութեան յայսմ նահանգի Տ. Ստեփաննոսի յայտ ածողի զտպագրատունս և հրամայողի առնել զգիրս: Աշխատասիրութեամբ ումեմն նուաստի Տէր Աղեքսանդրի ծառայի բանի»: Բ. **Դիրք խկապէս համառօս** «վասն և ճշմարիտ հաւատոյ և դաւանութեան ուղղափառ կաթուղիկէ ընդհ. Հայաստանեայց Եկեղեցւոյ...», հեղինակ Յովհաննէս Մրքուզ Ջուղայեցի: Առաջ Յիշատակարանին մէջ կը կարդանք « . . . յիշել . . . որ և կամակցութեամբ միմիանց զուն զործեալ ի վերայ զործարանի տպագրութեանս, այսինքն զՄիքայել Վ., զՅովհաննէս Վ. զշարադրող գրոյս, զԱղեքսանդր Վ., զԵսայի. զԱհարոն Վ., զնոգերարձու Վանաց և տպագրութեանս զՏէր Անդրէասն, Թովմասն, Յոհանն, և այլք զործակիցք տպագրութեանս»: 1688 ին դարձեալ Ամենափրկչի տպարանը լոյս ընծայած է **Դիրք ժողովածոյ ընդդէմ հերկաբնակաց**, «մանաւանդ . . . ժողովոյն Քաղկեդոնի, արարեալ Ս. Վարդապետաց»: ** Վանքը 192 տարուան տպարանական ամբիւին մը կ'ունենայ: 1844 ին ձավայի մէջ վաճառական՝ Ջուղայեցի Մանուկ Յորդանանեան վանքին կը նուիրէ տպարանական կազմածք, բայց 36 տարի վերջ միայն կարելի կ'ըլլայ նոյն տպարանէն գիրք հրատարակուիլ, քդ. աննպաստ պարագաներու հետեւանքէ: 1880 ին հոն կը դրոշմուի երկհատոր **Պատմութիւն Նոր Ջուղայոյ** հեղինակ † Պ. Յարութիւն Թ. Տէր Յովհաննէսեանց, Ն. Ջուղայի բնիկներէն որ ատենադպիրն էր համանուն վանքին և որուն կենսագրութիւնը կը գտնուի այս շահեկան աշխատասիրութեան մէջ: — 1892 ին դարձեալ հոն կը տպուի **Խուք**